

Ա Ր Ա Ր Ա Տ

Կը հրատարակուի երկու շաբաթը
անգամ մը, Հինգշաբթի օրեր:

Խմբագիր եւ Տէր,
ՓԱՌՆԱԿ ՄԱՏԹԵՍՍ ԱՅՎԱՏԵԱՆ:

ՊԱՏՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՒԹԱԳՐՈՒԹԵԱՆ
(Բաժնի տուրքէ ազատ):

Միացեալ Նահանգաց համար,
Մէկ տարեկան 2 տուրք,
Կէս 1

Օտար երկիրներու համար,
Մէկ տարեկան 12 շիլլին,
Կէս 6

Բաժանորդագիրք կանխիկ վճարելի են. և կրնան յղուիլ փոխանակագրով, Բոսթօն կամ Էքսպրէսի գրքամի հրամանով և կամ վաւերացեալ նամակով:

Թղթակցներէ կը խնդրուի իւրեանց ստանձնած հրապարակային անուան հետ բուն անուններն ալ խմբագրութեանս գիտցնել, չէ թէ հրատարակութեան, այլ վստահութեան համար:

Ձի հրատարակութեան գրութիւնը ետ չեն դարձուիր որ և է պարագայի ներքեւ:

Ուղղել ամեն գրութիւնը առ
THE ARABIAN,
No. 100 Centre Street,
NEW YORK.

ՆիՈՒ ԵՕՐԲ, ԵՇ, ՅՈՒՆՎԱՐ 29

ԿԱՐԵՍՏԻ ԾԱՆՈՒՅՈՒՄ

Յարգանք կը խնդրուի այն ամէն ազգայիններէն որք թերթիս բաժանորդ գրուելու կամ քննիչ յայտնած են և կամ կը փափաքին բաժանորդ գրուելով զանի շարունակ ընդունիլ, իւրեանց բաժանորդագրները խմբագրութեանս հասցնել բարեհաճին:

Ի ՆՈՐՈՅ ՄԲՏԻ

ԽՕՄԲ ԸՆԻ ԱՄԵՐԻԿԱՅԻՄ:

Ուրիշ սինակի մը մէջ Բրոքին. Ուիլքինսը Ուէլս ի «Հայկական Խնդիր» վերնագրով մի ընտիր յօդուածն որ Բրոքինսեան Ատլոքէյթի ամսոյս 15ի թուոյն մէջ երեւեցաւ, թարգմանելով կը հրատարակեմք և մեր աղջիկ ընթերցողաց ուշադրութեանը կը յանձնարարեմք:

Ուսեալ յօդուածագիրն անկեղծօրէն կը բացատրէ թէ Ամերիկեան Ժողովուրդը ինչ ընելու են Հայ ազգին համար. և բացարձակ հրաւեր կը կարգայ եկեղեցիներու բնակիչներու կատարել իւրեանց պարտականութիւնն, իբր պաշտօնեայք Սուրբ Աւետարանին, պատրաստելով Ամերիկեան Ժողովուրդը համակիր ըլլալու Հայոց ամենարդար դատին: Բրոքինսը Ուէլս Հայ ազգին սրտէն կը խօսի. եւ ճշգրիտ կը յայտարարէ թէ Հայոց անկեղծ բարեկամներ կը պակսին. Դիւանագիտական դարձուածոց մէջ անկեղծ բարեկամներ դատնել ներկայ դարուս մէջ անհնարութիւն ըլլալ կը թուի և այդ առաւելութիւնը ազատ խղճով Ժողովուրդէ մը միայն կրնայ

սպասուիլ: Միացեալ Նահանգաց Ժողովուրդը՝ իբր Ժողովուրդ, կրնայ որեւէ ատեն ցուկ մը ըլլալ Հայ ազգին նորա այս դառն ճգնաժամին մէջ, բաւական է որ գիտնայ և զգայ. եւ այդ գիտցնելու և զգացնելու գործն ալ ուղղակի այդ Ժողովուրդեան հովիւներուն կիցնայ, որք պաշտօն ունին քարոզելու ալիս Աւետարանը որոյ սիրոյն համար իւրեանց Հայ եղբարք գործէ ի վեր արիւն թափած և հեթանոսութեան ամէն հալածածաց զէմ զայն անխարանելի պահած են:

ՀԻՆ ԾԱՌԱՅԱՄԻՒՄ

Քանի մը շաբաթներէ ի վեր կադանդնուպոլոյ լրագրաց մէջ շարունակ կը կարդամք թէ Փոքր Ասիոյ այսինչ, այսինչ և այսինչ Նահանգներէն ամսոյս այսինչ, այսինչ և այսինչ թուականաւ եւ կամ հեռագրեր կը ծանուցանեն թէ Նորհիւսիս Վեհ. Սուլթանին յիշեալ Նահանգաց մէջ կատարեալ անդորրութիւն կը տիրէ և, Այս յայտարարութիւնը Բ. Դիւան տպագրական գրասենեակի կողմէ հրատարակութեան կը տուին: Միւս կողմանէ թուրք լրագիրք, ինչպէս Թարիք ևս. կիս-թուրքական աղբիւրներէ հերքելով թղթակցութիւններ կ'ստանան, կամ հրատարակութիւններ կ'ստատարեն, որոնցմով կը ջանամ փորձել եւրոպական կարեւոր լրագրաց ոմանց մեծ գզուշութեամբ ըրած ճշմարտ հրատարակութեանց անհիմնութիւնը կամատուրութիւնը հաստատել:

Ձեմք զարմանար որ վեհ. Սուլթանը, Ամեն. Խորէն Պատրիարքին առաջ քաշեալ վրայ զարեցրէ, որովհետեւ իր անուամբ այդպիսի չարք կը գործուին եղեր Հայաստանի մէջ. և չեմք տարակուսիր որ երբ վերջիցեալ հրատարակութիւնները կը կարգայ, մեղի պէսնա ալ կը զարմանայ իւր անուամբ այդպիսի ուտեր խօսելուն համայ իւր բարձր աստիճան պաշտօնէից կողմանէ: Սա չեմք կրնար հասկնալ թէ աշխարհիս մէջ ինչ բան ըրին կամ գործադրեցին այդ մարդիկը սա մէկ քանի օրուան մէջ, որով կըցան բաց ճակատով այդ պաշտօնական յայտարարութիւնները հրատարակութիւն տալ: Արդեօք բոլոր Բիւրոները և Ձեռքեղները զինաթափ ըրին. չէ թէ մինչև հիմայ հարկւրաւոր անձանց որիւնը մտած և անպատիւ մնացած ոճրագործները կայծակի տրադութեամբ օրինաց ամէն խտու. թեամբը պատժեցին: Արդեօք իրենց ներկայացուցիչ տրոց հաւաքիչներուն նոյն իսկ վերջերս գործած անխնայ չարագործութեանց պատիժները տնօրինեցին. չէ թէ իրենց պարտուցը մէջ թերի և իրենց դատաւաց մէջ գտնուող ոճրագործներն չի պատժող կառավարիչները պաշ-

տօնանկ ըրին: Ի մեր երկնից կուշեմք գիտնալ թէ այս բաներէն ո՞րը ըրին, որով կարողացան աշխարհի հրատարակել թէ Հայաքնակ այդ Նահանգաց մէջ կատարեալ անդորրութիւն կը տիրէ, ի շնորհս վեհ. Սուլթանին:

Եթէ այս բաները կամ անոնց մէկ մասը գործադրեցին, ինչո՞ւ կամչնան նոյն իսկ ըրածնին յանուանէ հրատարակելու որ այսխարհ ալ իրենց հետ ուրախանայ այդ հիմնական բարենորոգումաց վրայ, որոնցմով միայն անդորրութիւն կրնայ կայ ըլլալ Հայաստանի մէջ: Իսկ եթէ այդ բաները չըրին, ինչո՞ւ պէտք է այդպէս սուտ և անհիմն հրատարակութիւններ ընել, և վեհ. Սուլթանին անունը այդպիսի ստույգութեանց հետ կցել: Ըստ մեզ, եթէ բոլորովին լուռ կենային, թէ վեհ. Սուլթանին անունը արատաւորած չէին ըլլար, և թէ աշխարհիս հաւատացուցած չէին ըլլար որ իրօք Հայաստանի մէջ բարեկարգութիւն ըլլալով քաջ մը առնուած չէ:

Ազնեցուցիչ զարմացում մը կը պատճառէ մէկու մը տեսնել թէ Դուռ ըստած մարմինը տալիս չէ համոզուած որ այդպիսի հրատարակութիւններ, կամ բերաններ նոյն իսկ թուրքերէն իզատ որ և է անհատի, Ժողովուրդի և աղքի վրայ մագիչափ աղբեղութիւն չընէր. և այդպէս ըլլալ մեծէն մինչև պղտիլը եւրոպիոյ մէջ ամէն օր պոռալու վրայն. ուրեմն ինչ օգուտ, բաց ի Հայաստանի մէջ իրենց որ և է բարեկարգութիւն մտցնելու նպատակ չունենալը յայտնել:

Արդեօք այդ թրքական չկառավարութեան ղեկը իրենց ձեռքը ունեցող պաշտօնեայք ըլլալ մը նորիկի խարեական միջոցներ ստեղծելու հնարագիտութիւնն ալ չունին: Այդ խոստումներու, յայտարարութիւններու ևս ի խառան շատոնց առնուած է, և ատոնց քանի բարա արժէք ամէն մարդ գիտէ, ինչպէս անցեալներս Մ. Կլաւսթըն ալ ըսաւ:

Ժամանակաւ լրագիր մը ակնարկեց որ Էլպիսիսիսներէ շինուած Բաշաներէ շատ մեծագործութիւններ չ'աշխատուիր. և ասանկ ըսելուն համար պատժուեցաւ. բայց հիմայ նոյն իսկ քաշները գարու սեմին վրայ իրաց վիճակէն դատելով կ'ստիպուիմք հաւատալու որ յիշեալ ակնարկը ընաւ չափազանցութիւն չէ եղած:

Ալ զարմանալին կայ. Թարիք կամ Բոսթօնի թրքաբօնտէից և կամ այս երկուքի մէկուն թղթակցիցը Տէյլի Նիւզի հրատարակութիւնները հերքելու համար մի մասնաւոր կէտի մը վրայ խօսելով կըսէ թէ Կարնայ կուսակալը Գիւրտցեղապետները Նահանգին կեղծունը կանչած էր չէ՞ թէ գէշ դիտաւորութեամբ, այլ պատուիրելու համար որ եթէ «որ և է տեղ մը խաղաղութիւն խանգարող գէտք մը պատահի» յանցաւորք Գիւրտցեղապետը կողմէ պատժուի:

Իրող գէտք մը պատահի յանցաւորք Գիւրտցեղապետը կողմէ պատժուի: Եւ այսպէսով անգամ մը ևս ամբապնդուի հանրային անդորրութիւնը որ արդէն կատարեալ է:

Այսպէսով կուզուի ցուցնել թէ Կարնայ կուսակալը բարեկարգութեան նոր քայլ մը առած է Գէշ չէ, օրըստ օրէ բարեկարգութեան վրայ թրքաց ինչ դադար ունեցած ըլլալուն այսպիսի ապացոյցներ տրուելու են որպէս զի եթէ լուսաւորեալ աշխարհի մէջ մնացած են այնպիսի ներ ոք չեն հասկցած թէ ներկայ թրքական վարչութեան ինչքէն մէկ կրնայ սպասուիլ, անոնք ալ շուտով կը հասկնան:

ՀԱՅ ԱԶԳԻՆ

ԻՆԴԵՍԿԱՅՈՉ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ
ԵՒ
ՆԵՐՍՈՒՆԵՒՎԵՑԻՑ ԽԵՂԻՍԻՐԸ:

Կոտանդնուպոլոյ Հայ երեւելաց տնից առ թրքաց Սուլթանին մատուցած նշանաւոր խնդրագրերն և Սուլթանին առ այդ տուած պատասխանին հետեւեալ պատճենները Լոնտընի Հայաստանի կը պարտիմք: Այս մասին ԱՐԱՐԱՏ իւր ըսելքը յաջորդ թուոյն պարտաւորած է թողելու տեղոյ անձկութեան պատճառաւ: Այս ժամանակ ըսելով կը բաւականանամք որ իրող այդ Հայ կոչուած էֆենտիները որք այս խարեական մեծագործութեան գլուխ գտնուեցան, լուռ կընեն որ աղքին յարկութեանց զոռչանան որ կրնայ օր մը իրենց վրայ թափուի. և թէ պէտ առ այս միջոցներն պատասխանատուութեան ղերծ կը գտնեն, բայց կրնայ պատահիլ որ մը որ իրենց արարքներուն համար պատասխան տալու ըստիպուին արդար դատաստանի մը առջեւ:

Ահաւասիկ այդ հետաքրքրական գործիքին պատճենը:

Անձինք ոմանք այլ և այլ տեղեր չարամիտ հրատարակութեանց և դատապարտելի գործոց ձեռք գործ են ի վնաս շահուց և բարօրութեան Հայ հասարակութեան պարզամիտները մտրեցուցնելու և խղիւղութեան համար այն հաւատարմութեան կապը, որով Օսմանեան կառավարութեան հետ միացած են Հայ հպատակը, Այդ մարդիկ Հայ հասարակութեան կարի փոքրիկ մասն ըլլալով, ամենեւին իրաւունք չունին յանուն աղքին այդպիսի ինչ գործելու: Ամենեւին ծանուցեալ մէկը չի գտնուիր իրենց մէջ, որով յայտնի կըլլայ որ Հայ հպատակը ամենեւին հաղորդ չեն անոնց զապախարաց ձինք հարկւր տարիէ ի վեր Հայ խաղաղ և երջանիկ ապրած են Ձեր վեհափառութեան մեծափառ նախնեաց հովանւոյն ներքեւ, և պահած են իրենց կրօնը, իրենց լեզուն և իրենց ազգութիւնը: Այս ամէն բարիք իր սրբազան պարտաւորութիւն մը դրած են իրենց վրայ հաւատարմութեամբ առ Օսմանեան կառավարութիւն, և ի փոխարէն նորա վրտահովութեանը արժանանալ: Այս մեան ժամանակին մէջ մանաւանդ, այն բարոյական և նիւթական բարեքներ որ Ձեր վեհափառութեան

գահակալութեան օրէն ի վեր Օսմանեան հպատակաց վրայ տուտացած են, նաև Հայք մասնակից եղած են անոնց, և յայտնի է որ ասիկէ ետեւ մասնակից ըլլան նոյն կայսերական տուտագիւ պարգեաց: Ձեր վեհափառութիւնն ուրեմն շնորհ ընդ հաւատալ որ Հայ հաւատարիմ հպատակը ուրիշ բանի չեն փափաքիր, բայց խաղաղութեամբ ապրելի կայսերական կառավարութեան հովանւոյն ներքեւ: Նոյ. 17, 1890.

Ձեռնագրողը, Թալիք (Փաղէզեան) նախարար ել ձեռնից. Յարութիւն Տատեան, պետական ենթաքարտադար ի պաշտօնարանի Արտաքին գործոց, Վահան, խորհրդական ի պաշտօնարանի արդարութեան. Սէրվիչէն, Ժեռակուտի անդամ. Սարգիս (Պալեան), առաջին ճարտարապետ կառավարութեան. Նուրեան, պետական խորհրդոյ անդամ. Սարգիս (Համամեան), կայսերական ըսմիսը առ Ժխախտի Ռէփին. Գաբրիէլ (Նորատունկեան), իրաւապետ խորհրդական Բ. Դրան. Սիմօն Մաքսուտ. Իլիւս (Չայեան), օգնական պետութեան ենթաքարտադար ի պաշտօնարարի Արտաքին գործոց. Կրիզոր (Սորեան), հանուակալ ի պաշտօնարանի Արտաքին գործոց Ուան (Պաշտօնապետ), տնօրէն սենեկին հպատակութեանց, Կարապետ (Սոմաշեան), գրաստուոր ի վճարելի ատենի. Տիգրան (Փէշտիմաշեան), խորհրդական Բրէժիկ Կայսեր պալատին. Յովհաննէս (Աղնաւուրեան) ճարտարապետ պետական շինուածոց. Առաքել, որդի փառապետ Պօղոս Պէշի. Արիկ ունեան. Յովհաննէս փափաղեան, գանձակալ խնայութեան արիւղ. Միքայէլ Մամիկանեան, տնօրէն սենեկին թարգմանութեանց ի Դրան Սպարապետի. Անպոն Մաքսուտ, սեղանաւոր. Թովմա Սորատունեան նախագահ առաքարական Բ. դատարանի. Սարգիս Կիւլչէնկեան, վաճառական. Տիգրան Եւսուֆեան, անդամ առաքարական Ս. դատարանի. Յովհաննէս Էստեան, վաճառական. Մատթէոս ունեան, վաճառական. Անտոն Հաճեան, սեղանաւոր. Տիգրան Կիւլչէնկեան, վաճառական. Մանուկ Կարապետ, անդամ վաճառական անեկի. Մերիք Պոլի, փառապետ. Ալեքիս Կարապետ, փառապետ. Նշան Հարեց, վաճառական. Մովսէս, սեղանաւոր. Բարսեղ Հալաճեան վաճառական:

Այս ուղերձը ստորագրողաց հետեւեալ պատասխանը եւալ կայսերական պալատէն. Քեր վեհափառութիւնն Սուլթանին հանձնեալ ձեր առ նա մատուցած միաբան ուղերձը իւր տեղեկութեան ընդունելով. Այդ գրութեան մէջ ցաւ կը յայտնէք թէ արք ոմանք վնասակար մտածութեան մը հետեւելով, հակառակ Հայոց հաւատարիմ հասարակութեան փրկութեանը և շահուն համարձակած են այնպիսի միջոցներու ընտել որ Հայոց մէջ եղած միաբանները կը մոլորեցուցնեն և կը խղեն այն հաւատարմութեան կապերը որով գարեթէ ի վեր միացած են Օսմանեան ինքնակալութեան հետ: Միանգամայն կ'աւելցունէք որ այդ մարդիկն Հայ հասարակութեան կարի փոքր մասն ըլլալով, չունին իրաւունք իւր անուամբ գործելու. զի ամենեւին մասնակից չէ Հայ հաւատարմութեանը այդ մարդոց խորհուրդներուն: Իւր վեհափառութիւնն մեր Օգոստոսիս Տէրը ամենայնիւ համոզուած է որ իւր Հայ հպատակաց հաւատարմութեան ինքնակալութիւնը, և փառապետ Հայոց թէ անթերի է առ Օսմանեան ինքնակալութիւնը, և փառապետ Հայոց թէ անթերի է առ Օսմանեան ինքնակալութիւնը որք վերջին օրերս հրապարակ եղած են, երբեք խախտած չեն և ոչ մէկ Հայոց մը հաւատարմութեան զգացումները, և

ՌԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
ԵՒ
ՄԵԾ ՀԱՆԴԵՍ
Ի ՅԻՅԱՄԱԿ
ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՆԱՆՑ
ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ:

Ազգային սոյն անմոռանալի յիշատակը մի փառաւոր հանգիստիւ պիտի ճարաթ, Մարտ 7, ժամը 8 ին երեկոյեան, յիս-թըրն Սթար Հօլ, անկիւն 3րդ Ավենյու և 7րդ փողոց:

Կը հրաւիրուին ամէն ազգա-յինք պատուելանմազ Զօրաւորին յիշատակը և վայելել սոյն շքեղ երեկոյթը: Կազմարանք ձրի պիտի ծառայուին:

Մտից տոմսակի գինն է 25 սենթ, և կ'ստացուի գաղթական-նութեան յանձնարարին ան-գումներէն և թերթին խմբագ-րութենէն:

Ի Իմաց Անձնակցութիւն
Ե. Ս. ՏԻՆԵՍԵԱՆ,
Քարտուղար:

ԻՍԼԱՄԻ ԼՈՒՐԵՐ

Գերմանիոյ կայսրը իւր թիկնա-պահներէն Մէյնըր փոն Հիւսթէն Կոս-տանդնուպօլիս գրկած է Սուլթանին ականակու թուր մը քննադատ հա-մար, փոխարէն այն օգնութեան որ թուրքական իշխանութիւնը մատու-ցին Յիւսթէնը Զարլս Գերմանական զորահանորին:

— Կոստանդնուպօլսէ հաղորդ-ուած տեղեկութիւնք կը ծանուցա-նեն թէ, Յունաց Պատրիարքարանի և Դրան միջև գտնուած վէճն վեր-ջանալով մայրաքաղաքին Յոյն եկե-ղեցիք Մենի ան առաւատուութեան վերա-տին բացուած են և Պատրիարք կատարուած:

— Էրզրումի Բրիտանական հիւ-պատոս, Մր. Գլիֆֆըրտ Լօյտ ամ-սոյս 7ին իւր մահկանացուն կնքած է ի Կոստանդնուպօլիս: Տէյլի Նիւոզ կ'աւելցնէ թէ սոյն Բրիտանական պաշտօնեայն իւր պատմութեան թեան մէջ, իւր ունեցած իշխանու-թեանց արժանի գործ մը չէ տեսած:

— Էնտէրմանտան Պէլժ կը գրէ թէ Աւստրիոյ և Բրիտանիոյ ներկա-յացուցիչք գաղտնի հասկացողու-թիւն մը ստորագրած են, որով Աւստ-րիա Եւրոպական Թուրքիոյ մէջ Սէ-լանիէ նաւահանգիստը գրաւելու ի-րաւունք կատարայ, այն պայմանաւ որ նա թուրքիոյ, Հայաստանի և Ե-գիպտոսի նկատմամբ Բրիտանիոյ քա-ղաքականութեան նեցուկ ըլլայ:

— Երեւելի արեւելագէտ և Լա-զարեան ճեմարանի ուսուցիչ Բրոֆ. Մկրտիչ Յովսէփեան իմին, իւր մահ-կանացուն կնքած է, Դեկ. 23 ին ի Մօսկուա: Լօնտոնի Արմէնիա կը տեղեկացնէ թէ նա իւր հարստու-թեան մի մեծ մասը կտակած է մեր ազգին գրականութեան նահապետ-ները քաջալերելու համար ի կանգ-նուած հաստատութեան մը:

— Թրքաց Սուլթանն հրաման տուած է իւր նաւային պաշտօնէու-թեան, կառավարութեան մարտա-նաւերը պատրաստ վիճակի մէջ պա-հել: Հին նաւերը նորոգուած և պատրաստուած են ի հարկին առանց յապաղման ի ծով ելնելու համար:

— Վիեննայի Օսմանեան դես-պան Սաաթուլլայ Փաշա որ ամսոյս 16 ին անձնասպանութիւն փորձած էր, ինքզինքին տուած վէրքերուն չի դիմանալով ամսոյս 18 ին մեռած է նոյն քաղաքին մէջ:

Կըսուի թէ իւր անձնասպանու-թիւնը ընտանեկան պատճառներէ ա-ռաջ եկած է:

— Վիեննայէն հասած լուրեր կը ծանուցանեն նաև թէ Թրքական կա-ռավարութիւնը մեծ սարսափի մէջ ինկած է, տեղեկանալով որ իսկ մը Թրքական պաշտօնեայնէր Ռուսիոյ հետ համաձայնութեան մէջ կը գտնուին, և անկէ կանոնաւոր թոշակ կ'ստանան: Եւ թէ 180 ի չափ ծըպ-տեալ Ռուսիացի երկրաչափներ կը գտնուին ի Կ. Պօլիս որք Պոսփորի ամրութեան յատկապէս երկրաչափներ Ռուսական կառավարութեան կը հաղորդեն:

— Երկրաչափ Լուցի և Իշխան Զաչարաքի, երկու Ռուսական նիւթ-իւրները Կոստանդնուպօլսոյ մէջ Թուրք ոստիկանութեան կողմէն, հակառակ միջազգային օրինաց ձեռ-բարկուելով Ռուս կառավարու-թեան յանձնուած են: Տեղեկու-թիւնք կը հաւաստեն թէ սոյն ձեռ-բարկութիւնը հրամայող ոստիկա-նայնք Թուրքիոյ կառավարութե-նէն 200 ռուբլի կաշառ ընդունած է այս գործին համար:

— Կոստանդնուպօլսոյ Ազգային երաժիշտանական ժողովը, Վեհ. Սուլթանին խաղաղական խոստմանց վրայ յենով, Սր. Սորէն Պատրիար-քի և Կրօնական և Գաղաքական ժո-ղովներուն իշխանութիւն տուած է իրենց պաշտօնը վարելու: Բայց կ'ըս-ու թէ Սորէն Սրբազան տեսնելով որ Սուլթանը իւր առ Յոյնս ըրած խոստմանը պահելու տրամադ-րիչ չէ լըլցացած է իւր հրաժարականն ետ առած ըլլալուն համար: Եւ մոտ-գիր է այս անգամ իսպառ հրաժա-րիլ իւր պաշտօնէն:

— Տէյլի Նիւզի թիֆլիզի թղթա-կիցը Յուն վար 15 թուականաւ կը գըրէ:

Էրզրումէն լուր հասած է որ Քիւրտ Պէյրուս իւրաքանչիւր հը-րաման ընդունած են Հայաստանի կատար իշխանին իրենց հետորդ-ները հաւաքելով պատրաստ գտ-նուելու: Սոցա գնէք և սրբախուած են կառավարութեան շտեմարաննե-րէն: Նոյն իսկ Էրզրումի մէջ Թր-քերը վերստին գաղտնի ժողովներ գումարած են և կըսուի թէ Հայոց եկեղեցու և շուկային քայքայման և ընդանուր Բրիտանիոյ ժողովուրդ-եան վրայ յարձակելու խնդիրները յուրաքանչիւր թուրքական վարչութեան բարբարոսութիւնը երթալով իր շատ-նայ, և Բրիտանիոյ ժողովուրդը յետին ծայր աղքատութեան վե-րածուած են նոցա ըրած անիրաւի և սպորինի հաւաքմանց պատճա-ռաւ:

— Քիւրտ Պէյ մը, Կառավարու-թեան գործոց մէջ գործածուող Հա-յու մը վերջերս ըսաւ որ Կոստանդ-նուպօլսէն հրահանք ընդունած են Հայերը սպաննել և նոցա մարմնե-րը գաղտնապէս անհետացնել:

— Պելլիրաթի կիսա-պաշտօնա-կան Օմէք Լրագիրը Մալիսարի Ար-նաւաւտներու Հիւսիսային Ակադեմիոյ մէջ գործած սոսկալի անգլիկութիւն-ները կը պատմէ: Այս երկու հարիւր յիսուն զինեալ ասպատակաց խմբ-եակը նոյն անդերու քրիստոնէայ ժողովուրդը անկոնայ կը չարչարե-ն և կը ջարդեն եղբ. Բիշէփի գայմա-գամը յայտարարէ թէ բաւական զին-եալ զօրութիւն չունի չարագործ-ները ընկճելու համար:

— Կոստանդնուպօլսէ եկած լու-րեր հետզհետէ կը հաղորդեն թէ

Սուլթանի կողմէն պատուանշան-ներ չնորհուելու վրայ են, առ Նո-րին Վեհափառութիւնն մատուցեալ հանրագիրն ստորագրող ազգայնոց:

— Կ. Պօլսից գրում են Աթէնքի լրագիրներին, որ Կ. Պօլսի Պարսից Դեսպանը բողոքել է այն բանի դէմ, որ Թուրք-Պարսկական սահմանա-գլխի վրա հսկելը յանձնված է Քուրդ ձիաւորներին: — Մշակ:

— Կ. Պօլսից գրում են. «Սուլ-թանը իբրեւ նշան իր շնորհակալու-թեան դէպի արտաքին գործերի մինիստրութեան խորհրդական Վա-հան բէյը, որ շատ է աշխատել իրենց պատրիարքի հետ ունեցած բանակցութիւններ ժամանակ, չը-նորհել է Վահան բէյին իմիջազի պատուանշանը»: — Մշակ:

— Հնդկաստանից, մօտ 2,000 հնդկացի կանայք խնդրագիր են ուղարկել Վիկտորիա թագուհուն, որով խնդրում են փոխել ամուս-նութեան վերաբերեալ օրէնքը: Մինչև ատմ գոյութիւն ունեցող օրէնքով Հնդկաստանում աղջիկնե-րը իրաւունք ունէին 10 տարեկան հասակում մարդու գնալ: Այժմ խնդրում են թոյլ չը տալ, որ աղ-ջիկները ամուսնանան 14 տարեկա-նից առաջ: — Մշակ:

— Գերմանիոյ կայսեր կողմէ Վեհ. Սուլթանին նուիրեալ թուրը գե-ղակերտ քանդակներով զարդա-րուած է, պատեանը բոլորովին ակա-նակու է և մէկ կողմը գործած է Վեհ. Սուլթանի ու միւս կողմը Վիկէլէմ կայսեր անուանց սկզբնա-տառերը:

— Ճարտի վեհապետին կողմէ Վեհ. Սուլթանին եղած թանկագին նուէրներու մէջ կան երկու ճաքո-նական թաղարներ մէկ մէկ մեղր բարձրութեամբ, որոց ներքին մա-սերուն վրայ հանգային բաղադրու-թեամբ մը և արտաքին մասերուն վրայ ալ թանկագին քարերով գրա-կոտիկոններ ձեւացուած են: Թա-ղարներու իւրաքանչիւրի վրայ սպի-տակ արժիւններ նկարուած են: Այդ թաղարներ մէկ գործարանի մը մէջ միայն կը շինուին, ուր օտարականը չեն ընդունուիր արհեստին դաղու-նիք դուրս չհանելու համար: Նուէր-ներու մէջ կայ նաև թուր մը, իոր ու կողմը երկայն և պատեանն ամբողջ ականակու է: Թուրին հետ կան նաև նոյն ձեւով երկու փոքր դաշու-ներ: — Արեւելք:

— Չմիւռնիոյ լրագրաց մէջ կը կարդանք թէ անցեալ Կիւրակէ օր չորս զինեալ սեւամորթեր Անձալի անուն տեղը ջաղացքի մը վրայ յար-ձակելով հոն գտնուող տղայ մը բռնել և լեռը տանիլ ուղեր են, սակայն ջաղացքին տէրը՝ Պ. Թամ պաքօրու, ընդդիմացել է: Ասոր վրայ աւագակները ջաղացքին տի-րոջ վրայ հրացան պարպելով սպան-ներ են եւ յետոյ տղան եւս սպան-նելով ջաղացքը կողոպտելու ու խոյս տուել են: Այս դէպքը պատճառ է ջաղացական եղբայրն որ նոյն պա-հուն մահճակալի մը ներքեւ պահ-ուելու է եղբ. — Արեւելք:

— Կըսուի թէ Զանգիպարի Սուլ-թանը խեղագարած է: Նորին Վե-հափառութեան այս դժբաղդու-թեան պատճառ կը բերեն, Անդ-դիացուց զանի իւր պետական իրա-ւունքներէն զրկելն:

— Պուտտայական վերջերս ըս-կած են եռանդուն կերպով դի-մադրել Գրիստոնէութեան Ճարտի մէջ տարածմանը դէմ: Այս գործին համար 40 է աւելի հրատարակու-թիւններ ի լոյս կ'ընծայուին նոյն երկրին մէջ:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Սր. Մկրտութեան տօնի առ թիւ Արթ. Յով. Սարաճեան հան գիտաւոր Սր. Պատարագ մատոյց Սր. Ոսկերեան մատրան անցեալ Կիւրակէ օր: Նորին Արժանապա տուութիւնը պիտի այցելէ և խօս Հայկական Միութեան և Գաղթակա նաց ժողովին յառաջիկայ նստերուն և պիտի քարոզէ ի վերոյիշեալ Մատ րան յառաջիկայ Կիւրակէ օր:

— Գաղթականաց ժողովն իւ սովորական նիստն ունեցաւ անցեա շաբաթ գիշեր ընդ Նախագահու թեամբ Պրն. Հ. Էկինեանի և զբաղեց ա Նիւ-Եօքի գաղթականութեա վերաբերեալ ինչ ինչ խնդիրներով Սոյն ժողովոյ Յանձնարարին կողմէն պատրաստութիւններ ըլլալու վրա են Սրբոց Վարդանանց հանգէսն չը քեղութեամբ տօնելու համար, և այ նպատակաւ տոմսակներ արդէն չը բա-րեութեան հանուած են, ինչպէ ուրիշ սիւնակի մը մէջ գտնուած ծա նուցումէն պիտի տեսնուի:

— Ամսոյս 23 ին ի քաղաքս սան Պրն. Յով. Պօլսից Գոհեմիացի Պարբի Հայազգին, որք Թրամպլայ մի նոր գիւտի այս երկրին մէջ չա հազործման համար մի քանի շա-բաթներ աստ պիտի մնան: Պրն Գարբի Ռուսմանիցի ազգային թիւ և կը յաւանդէ որ Հայգական Մի-ութեան յայտարար նստին այցելէ:

— Յուլի օրու իմացանք Տիկին Օհանէն Մուլթաֆի մահը, յետ եր-կարատեւ հիւանդութեան:

— Բողոքական-Եպիսկոպոսական մի ընդհանրական ժողովի մէջ որոշ ուած էր ինչ ինչ բարեփոխման ներմուծել յիշեալ եկեղեցւոյ սովոր-ութեանց մէջ: Ըստ սոյն որոշմանը այսուհետէ մեր Եպիսկոպոսակա ներարք հին կաթողիկէ և առաքե-լական եկեղեցաց վաղեմի սովորու-թեանց համեմատ երեսնին պիտի խաչակնքեն, և ժամարար երէցք առաւել պայծառան օք պիտի զգես-տաւորին: Մետրապօլիս եկեղե-ցիներէն շատերը արդէն սոյն սովոր-ութիւնները իւրացնել սկսած են:

"The ARAB"
No. 100 Centre Street, New York.
ADVERTISING RATES.

Inches.	1 Month.	3 Months.	1 Year
1	\$ 2.00	\$ 5.00	\$16.00
2	3.50	8.00	25.00
3	5.00	11.00	35.00
4	6.00	14.00	45.00
5	7.00	17.00	55.00
6	8.00	20.00	65.00
7	9.00	23.00	75.00
8	10.00	26.00	85.00
1 Col.	11.00	29.00	95.00
1 Col.	20.00	55.00	180.00

Per Line (agate) 15 cents each issue
The above prices are for the first and last pages only. Ten per cent additional for the third page, next to reading matter.

If YOU WISH
to Advertise
Anything
Anywhere
at Any time
WRITE TO
GEO. P. ROWELL & Co.
No. 10 Spruce Street,
NEW YORK.

Mrs. Winslow's
Soothing Syrup.

Տիւ. Ուինսլօւ Ուոնսլօւ օՇՄԱՐԱԿԸ:

Երեւելի տարիներէ առելի է որ Տիկին Ուինսլօ օի Ուինսլօ Օշարակը միլիօնաւոր մայրիկ կը գործածու-ուի իրենց զաւակայ ակուայ հա-նելու ժամանակ: Գիշերները կը խանգարուի քը և հանգստութիւնն իր-ը վրադնէ: Կիւրակէ օր և յաջորդ զաւակէ մը, Եթէ այդպէս է, ան-միջապէս Ակուայ շատով Մանկնց համար «Տիկին Ուինսլօ» Ողորդ Օշարակ օէն չիւ մը առէք: Սորա արժէքը անհամար է: Խեղճ պըգ-տի տառապեալին սնմիջապէս դար-ման մը պիտի ըլլայ: Մայրեւր, ա-սոր վրայ կրնաք ապաւինիլ: Բնաւ սխալ չի կայ, Կըրժիկ Փորութու-թիւն, կը կանոնաւորէ Ստամոքսը և Աղիքները, կը բժշկէ Աղեաց Խի-թը, կը կազմէ Լինտերը, կը նը-ուագեցնէ բորբոքումն, և ամբողջ կազմուծը կը կազդուրէ և կը զօ-րացունէ: Ակուայ հանող մանկանց համար «Տիկին Ուինսլօ» Ողորդ Օշարակը, ճաշակի հաճելի, և Մի-ացեալ Նահանգաց մէջ ամէնէն հին և ամենապաւ ըշկուհի և անուշիչ-ներէն մէկուն գեղագիրն է, և կը ծախուի աշխարհիս ամէն գեղա-գործներու քով: Եւրաքանչիւր չի-չի գինն է քառն և հինգ սենթ: Ուինսլօ միայն:

Mrs. Winslow's Soothing Syrup.

Ս. ՕՇՄԱՐԱԿԸ
Արեւելեան և Տեղական Նպարե-ղէններ:

59 Ուաշինկոն և 216 Էյսթրիճ Փողոց:

Սոյն Խանութներու մէջ կը Վաճառուի մասնաւոր խնամք Կ. Պօլսէ բերուած Արեւելեան ամէն տեսակ Նպարեղէնք, Աղձեղէն-ներ, ընտիր Պտուղներ, Ամերի-կացոց ախորժիկի ու նուէրի ար-ժանի Անուշիղէք, զանազան ժանի գիւններ ու օղիներ, նաև ճանկարկան Գալլալոյի տա-լին կարգի ծխախոտէ շինուած սիկարէլներ:

Կանադայի կառավարութիւնը ժամա-նակին խնամք կը կատարուին, և յաճախողներն գոհացնելու համար ամէն ջանք ի դործ կը դրուին:

ԱՅՂ.
Հ. ԷԿԻՆԵԱՆ, Հայերէն միակ
Տպագրիչ ի Միացեալ Նահանգս, պատիւ ունի ծանուցանել թէ յանձն կ'առնէ տպագրել ամէն տեսակ Հայերէն և Անգլ. գործ մեծ կամ փոքր քան սկութեամբ: Տպագրութեան մաքրութիւնն և աժանութիւնն կարի չէ գերու-զանցել: Իր Նիւ Եօքի մէջ ձուլել տուած Հայերէն ընտիր տպար-բական են մեծկալ հատորներ տպագրելու: Գիրք, տետր կամ ո' և է տպագրիչի բան ունեցող ազգայնոց ու շարքութիւնն կը հրուիրուի այս մասին:

B. H. TASHJIAN & Co.,
100 Centre St.,
New York.

BOOK AND PAMPHLET BINDERS
CLOTH & PAPER BINDINGS,
MAGAZINES,
Reviews and Newspapers bound and mailed. Estimates furnished heartfully.
— ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Հ. ԷԿԻՆԵԱՆ —